**МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**
**ЗАО “ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”**
**ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР**

**MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA**
**“HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS” CJSC**
**GENERAL DIRECTOR**

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**
**ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ**
**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ**
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No. 23-Լ
«01» 03 2022թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետի պահանջով և հաշվի առնելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Տիգրան Սահրադյանի 2022 թվականի փետրվարի 25-ի № Ն/16.5/901-2022 գրությունը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի» աջակցությամբ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» վարկային համաձայնագրերով (այսուհետ՝ Վարկային համաձայնագրեր) նախատեսված 2021 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական ընկերության ընտրության մրցութային գործընթացի կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով՝

| | | |
|---|---|---|
| Գևորգ Մուրադյան | - | Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր հաշվապահ (Հանձնաժողովի նախագահ) |
| Արարատ Մովրովյան | - | Ընկերության ֆինանսական բաժնի պետ |
| Հակոբ Գրիգորյան | - | Ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի ծրագրի ղեկավար |

Մարգարիտա Ղազարյան - Ընկերության իրավախորհրդատու

Աննա Ղազարյան - Ընկերության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ

Արփինե Ասրյան - Ընկերության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

Մարիամ Գրիգորյան - Ընկերության ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ

Տիգրան Սահրադյան - Ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար)

2. Հանձնաժողովին՝ կազմակերպել և իրականացնել Վարկային համաձայնագրերով նախատեսված աուդիտորական ընկերության ընտրության մրցութային գործընթացը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր տնօրենին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ